



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ՔՐԱՊԱՀԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«08 » 04 2010թ

ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ - 35

Տրված է՝

«Գեղին» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 38/2

Գործունեությունը՝

«Գեղին» ՓԲԸ կողմից N42 հատուկ լիցենզիայի համաձայն
Սարավաճ գյուղի մերձակա տարածքում իրականացվող
որոնողական և որոնողագնահատողական
աշխատանքների վերաբերյալ
ՀՀ Վայոց Զորի մարզ

Տնօրեն՝

Ա. Գևորգյան

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 35

«08» 04 2010թ.

«Էկո Թիմ» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեռքիմ» ՓԲԸ ՀՀ Վայոց Զորի մարզի Սարավան գյուղի մերձակա տարածքում ուսումնասիրության N 42 հատուկ լիցենզիայի համաձայն իրականացվող որոնողական և որոնողահետախուզական աշխատանքների նախագծի վերաբերյալ

Դատավորական՝

«Գեռքիմ» ՓԲԸ

Նախագծում՝

«Էկո Թիմ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագիծ

Տեղադրամ մարզ՝

ՀՀ Վայոց Զորի մարզ



«Գեռքիմ» ՓԲ ընկերությունը ՀՀ Վայոց Զորի մարզի Սարավան համայնքի մերձակա տարածքում N 42 հատուկ լիցենզիայի համաձայն նախատեսում է իրականացնել որոնողական և որոնողահետախուզական աշխատանքներ:

Հատկացված լիցենզիայի տարածքը գտնվում է ՀՀ Վայոց Զորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին, Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս - հյուսիս արևմտյան մասում, 2500-2988մ բացարձակ բարձրության վրա: Մերձակա բնակավայրերն են նաև Վայոց Զոր մարզի Սարավան, Սարալանջ և Ուղեծոր գյուղեր:

Ամուսար լեռը տարածվում է Արփա և Որոտան գետերի միջև՝ հյուսիսից հարավ երկայնակի ուղղությամբ և ջրբաժան է հանդիսանում այդ գետերի ջրհավաք ավազաների համար: Հարավային ուղղությամբ լեռնալանջերը ցածրանալով միանում են Դարք գետի հովտին, իսկ հյուսիսում միաձուլվում են Սյունիքի իրաբխային բարձրավանդակին: Տարածքի գլխավոր գետերն են Արփան և Որոտանը, իրենց բազմաթիվ վտակներով: Լիցենզավորված տեղամասով է հոսում Արփայի վտակ Դարք գետը:

Ծրջանը անտառագործվ է: Բուսածածկը տեղ-տեղ ներկայացված է թփուտներով և մարգագետիններով: Տեղանքին բնորոշ է կարճ վեգետացիոն շրջան, մեծաքանակ տեղումներ, օդի և հողի ջերմաստիճանի ու խոնավության էական տատանումներ: Տարածքը բնութագրվում է բավականին խիստ կլիմայական պայմաններով՝ երկարատև ցուրտ ձմեռ և կարճատև գրու ամառ: Որոնողական աշխատանքները իրականացվելու են տարեկան 153 օր, հիմնականում հունիս-հոկտեմբեր ամիսներին: Աշխատանքային ռեժիմը շաբաթը 7 օր, 2 հերթափոխ՝ 8 ժամ տևողությամբ:

Որոնողական աշխատանքները կազմակերպելու համար նախատեսվում է ճամբար: Ճամբարի տարածքում կտեղադրվեն շարժական կոնտեյներներ, որոնք կոգտագործվեն որպես գրասենյակ, ճաշարան, խոհանոց, հանգստի տնաներ, պահեստ, արհեստանոց, ավտոտեխնիկական կետ: Նախատեսվում է նաև գեներատոր, նմուշների նկարագրման լարորատորիա, մաքրման կայան, ջրի, դիգելային վառելիքի և բենզինի տարրություններ: Ճամբարը կահավորված է անվտանգության համար անհրաժեշտ սարքավորանքով: Աշխատանքները իրականացվելու են տարեկան 153 օր, աշխատանքային ռեժիմը շաբաթը 7 օր, 2 հերթափոխ՝ 8 ժամ տևողությամբ հիմնականում հունիս-հոկտեմբեր ամիսներին:

Ուսումնասիրության տարածքում առկա է գրունտային ճանապարհների ցանց L=26.4կմ, լրացուցիչ ընկերության կողմից տեխնիկայի անխափան աշխատանքը և տեղաշարժը ապահովելու նպատակով նախատեսվում է նոր գրունտային ճանապարհների ցանց L=41 կմ: Որոնողական և որոնողահետախուզական աշխատանքների հիմնական միջոցառումները կապված են լիցենզիայի տարբեր տեղամասերում հորատման և նմուշների հետազոտման հետ:

Աշխատանքներում ընդգրկված են երեք հատ հորատող մեքենա, օժանդակ տեխնիկա և երկրաբանական նմուշների՝ հորատիանուկների նախապատրաստման լաբորատորիան, որը գտնվում է մոտակա Գորայք գյուղում:

Որոնողահետախուզական աշխատանքների ընթացքում նմուշները նմուշառվում են հորատիանուկների՝ կեռների, տեսրով: Նմուշները գրանցվելուց հետո տեղափոխում են լաբորատորիա, որտեղ էլեկտրական սղոցի միջոցով բաժանվում են երկու հավասար կեսերի և չորանոցում $105\text{--}120^{\circ}\text{C}$ ենթարկվում չարացման միջև հաստատուն քաշի գրանցումը: Նմուշները ջարդիչում մանրացվելուց հետո փարեթավորվում և տեղափոխվում են Ռումինիա ALS Chemex լաբորատորիա հետագա որակական և քանական ուսումնասիրության:

Որոնողական աշխատանքների ընթացքում մթնոլորտային արտանետումները պայմանավորված են հորատման աշխատանքների ժամանակ առաջացող անօրգանական փոշու և հորատող տեխնիկայի ու գեներատորների կողմից օգտագործվող դիգելային վառելիքի արտանետումներով: Դիգելային վառելիքը օգտագործվում է հոսանք արտադրադրելու գեներատորի և հորատող երեք մեքենաների կողմից: Աշխատողների ճամբարի համար տեղադրվելու է GEP 110-2 տեսակի 380-415V մակնիշի, իսկ տեխնիկական ջրի մուտքան համար նախատեսվող պոմպակայանում **ΔΓΜΑ-75** մակնիշի դիգելային տեղակայանքներ:

Որոնողական աշխատանքների ընթացքում մթնոլորտ է արտանետվում՝ անօրգանական փոշի 0.11 գ/վրկ, ածխածնի օրոխի 5.46 գ/վրկ, ազոտի օրոխիներ 2.64 գ/վրկ, ածխաջրածններ 1.174 գ/վրկ, պինդ մասնիկներ 2.64 գ/վրկ, ծծմբի օրոխի 0.375 գ/վրկ:

Արտանետվող վնասակար նյութերի մթնոլորտում ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային «Ռադրուգա» ծրագրով: Համաձայն վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկների սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտու համար թույլարտելի նորմերի սահմաններում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է հորատող և այլ շինարարական տեխնիկայի սպասարկման, հարթակների ջրցանի, ինչպես նաև ԻՏԸ և բանվորների կենցաղային-տնտեսական ջրօգտագործման համար:

Որոնողական աշխատանքների ժամանակ արդյունաբերական /տեխնիկական/ ջրի ծախսը հաշվարկված է 98 մ³/օր, որը համաձայն ջրօգտագործման N 000008 4-3-Զ/Կ-Մ-Ն թույլտվության կիրականացվի տարածքում առկա լճակից, իսկ ճամբարի կենցաղային-տնտեսական նպատակներով անհրաժեշտ է 6.65 մ³/օր խմելու որակի ջուր, որը կմատակարարվի պայմանագրային հիմունքներով:

Հոսքաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում 6.55 մ³/օր ծավալով, որոնց մաքրման համար նախատեսվում է տեղադրել գերմանական ATB Umwelttechnologie GmbH արտադրության AQUA max մակնիշի կեղտաջրերի կենսաբանական մարման կայան: Մաքրված կեղտաջրերը համապատասխանում են ոռոգման ջրերին ներկայացվող պահանջներին և հեռացվելու են տեղանքի վրա:

Առաջացող կենցաղային բափոնները որոնք դասվում են վտանգավորության 5-րդ դասին պայմանագրային հիմունքներով կտեղափոխվեն քաղաքային աղբանոց:

Որոնողական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝ արգելել տեխնիկայի աշխատանքը գերբեռնվածության ռեժիմում և խնամքով վերաբերվել շրջակա միջավայրին:

Եզրակացություն

«Էկո Թիմ» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեոթիմ» ՓԲԸ ՀՀ Վայոց Զորի մարզի Սարավան գյուղի մերձակա տարածքում ուսումնասիրության N 42 հատուկ լիցենզիայի համաձայն իրականացվող որոնողական և որոնողահետախուզական աշխատանքների նախագծի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Փոխտնօրեն՝

Փորձագետ՝



Հ. Գրիգորյան

Ա. Մինասյան